

Ըստ այս Զուղայեցի Հայերուն ըսածին, անոնք (Անգլիական Ընկերութեան ներկայացուցիչները) պարտաւորուած էին մեկնել քաղաքէն Նատիր Ծաճին մասնաւոր հրամանին վրայ»։<sup>2)</sup>

Այս երկերես Անգլիացին, որ եկած էր Հայերու առևտուրը անդամահատելու, շարունակեց ամէն տեսակ կեղծ ու պատիր միջոցներով անոնց վստահութիւնը որսալ եւ անոնց օգնութեան ապաւինիլ։ Ան կը պատմէ, որ օտարներու տուած խրատներուն եթէ հետեւէր եւ Խիվա կամ Պուլարա երթար, «Ուղեւորութիւնը պիտի կորսուէր, եւ մենք մետաքսի առևտուրի մասին ծանօթութիւն չպիտի կարենայինք քաղել Գիլանի նահանգէն, ուր ստիպուած էինք վերստին յառել մեր ակնարկը, թէ եւ տխուր եւ խոթող ակնկալութիւններ միայն ունէին այդ կողմէն։ Ինչ որ մեզի կորով ներշնչեց այն էր թէ՛ Հայերը Ռէշտ ապրանք ղրկեցին։ Այնպէս որ, մենք ալ նոյնը ընել որոշեցինք եւ նոյն բախտին յանձնուեցանք»։<sup>(3)</sup>

Այս անգլիացիին Աստրախանի Հայոց դաղութիւն մասին տուած վկայութիւնները խիստ շահեկան են, սակայն, մեր նիւթին համար անմիջական արժէք մը չունին, ուստի կ'անցնիմ։

Էլթըն իր ընկերներու հետ կը շարունակէ միշտ Հայերու պոչին կղած ճամբորդել դէպի Ռէշտ, ուր կը հասնի յունիս 21-ին։ Ան կը վկայէ, որ մաքսատուրքը հարիւրին հինգ էր։ Այն Զուղայեցի Հայ վաճառականները, որոնց հետ իրր անկող հիւր մեր Անգլիացին ճամբորդած էր, երբ Ռէշտ կը հասնի, զինքը Ռէշտի իշխանութեանց մօտ կ'ամբաստանեն իր լըլտես։ Սակայն, անգլիացին եւ ընկերները ինքզինքնին իրր լոկ վաճառական ցոյց տալով, կը յաջողին չեղոքացնել իրենց դէմ եղած ամբաստանութիւնները։ 27 յունիսին անոնք Ռէշտէն կը մեկնին շրջակաները։

Հետաքրքրական է Էլթընի գործունէութեան նկարագրութիւնը այս կողմերը, մանաւանդ իր կարծիքները։

Յուլիս երկուքին Պարսից կառավարու-

թեան ներկայացուելիք պայմանագիր մը կը գրեն Անգլիերէն լեզուով, որ թարգմանել կուտան Պարսկերէնի։ Այս պայմանագրութիւնը ներկայացուած է յանուն Ռուսիոյ Անգլիական Առևտրականներու Ընկերութեան։ Հոն տըրուած պայմանները հետեւեալն են.—

1) Որ ընկերութիւնը կարենայ նաւարկել Կասպից ծովուն Պարսկական նաւահանգիստներուն մէջ։

2) Կարենայ որեւէ ատեն որեւէ տեղ Պարսկաստան Անգլիական ապրանք ներածել ու ծախել ազատօրէն եւ հում մետաքս զնել ու արտածել։

3) Կարենայ զնել տուն եւ շտերաման, առանց յաւելուածական տուրքի։

4) Պիտի ունենայ ամէն տեսակ ապահովութիւն անձի ու ինչքի եւ ազատութիւն։

5) Պատրաստ է ամէն ատեն Պարսից բանակին կամ առևտուրին համար պէտք եղած բոլոր լաթեղէնը հայթայթել։ Ասոնց համար վճարումները անմիջական եւ կանխիկ պէտք է ըլլան։

6) Որեւէ վէճ չի դատուիր տեղական իշխանութեանց կողմէ, այլ ուղղակի Ծաճէն։

7) Մաքսերը պէտք է վճարուին դործածական Պարսիկ դրամով։

8) Երբ իրենց ապրանքին ներածման մաքսը վճարուի, Պարսկաստանի ուրիշ վայրերու մէջ տարբեր մաքս կամ տուրք պէտք չէ դանձուի։

9) Բացի Ծաճին համար բերուած Ընկերութեան ապրանքէն, մնացեալը պէտք չէ որ բոլորովին բացուի, այլ հակին մէկ կողմը միայն, առ ի քննութիւն մաքսատան։

10) Ընկերութիւնը պէտք է ունենայ ներկայացուցիչ մը։

Այս պայմանագրութիւնը, տեղական իշխանութեան հաւանութեան արժանանալէ վերջ, կը զրկուի Պարսից Ծաճին, ոսկի ժամացոյցերու (իբր նուէր տրուած) ընկերակցութեամբ։

Մեր ուղեգիրը կը շարունակէ.

«Գիլանի դաւառը, որուն գլխաւոր քաղաքն է Ռէշտ, քաջ ծանօթ է իրր լուսագոյն եւ ամենաչատ մետաքս արտադրող Պարսից ամէն

2) Տե՛ս էջ 7-8։

3) Տե՛ս էջ 9-10։